ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2022

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Համարակալված բառերում և բառաձևերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքի բոլոր թվերի դիմաց են ճիշտ նշված:**

1. հասարակա-այինն երկիր, 2. եղնիկների խայ-ալը, 3. կարկաչ-ն առվակ, 4. Ա-թամար կղզի, 5. աչքի կո-, 6. ա- ու ահյակ, 7. աշխարհի չորս ծա-երը, 8. Սոֆ- մայրաքաղաք:

1) 1-ծ, 2-տ, 4-ղ, 6-ջ
2) 2-թ, 3-ու, 5-պ, 7-գ
3) 1-ծ, 4-ղ, 6-չ, 8-իա
4) 3-յու, 5-պ, 7-գ, 8-իա

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառակապակցությունների) բաղադրիչներն են գրվում *անջատ:***

1) ինչ(որ)է, ի(մի)բերել, ծայրից(ծայր), տեր(Սարգիս)
2) դեմ(դիմաց), նոր(խարբերդցի), երկու(երրորդ), ի(զեն)
3) ըստ(իս), սրբություն(սրբոց), կուժ(կոտրուկ), դուռ(դռան)
4) Սանկտ(Պետերբուրգ), (առ)այն, ձեռք(բերել), (այսու)հետև

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ՄՈՎՍԵՍ ՄԱՐԳԱՐԵ, ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ, ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ
2) ՄԵԾ ՀԱՅՔ, ԼՅՈՒԴՈՎԻԿՈՍ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ, ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
3) ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ԺԱՆ ԲԱՏԻՍՏ ՄՈԼԻԵՐ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
4) ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ, ԲԱՐԵՀՈՒՍՈ ՀՐՎԱՆԴԱՆ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՌԻՉԱՐԴ ԱՌՅՈՒԾԱՍԻՐՏ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն կա:**

1) մեհենական, հեծելազոր, հուզախառն, բնավեր
2) ատենակալ, աշխուժորեն, ալեծուփ, ալրաթաթախ
3) խուզարկու, վարագուրել, քրիստոնեական, կղզեխումբ
4) թուլակազմ, կենսախինդ, գուշակություն, միութենական

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ը*-ի սղում կա:**

1) փխրուն, մանրավաճառ, ակնհայտ, ծնրադիր
2) բարձրաձայն, եզրային, աստղազարդ, սանդղահարթակ
3) ցածրահասակ, ծանրաձող, մեղրածոր, դստրիկ
4) երփներանգ, կարծրանալ, սանրել, կակղամորթ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) վարանում, տարակույս, երկբայություն, կասկած
2) աջակցել, նպաստել, սատարել, ձոնել
3) մեծանուն, հանրաճանաչ, հռչակավոր, փառատենչ
4) սնամեջ, փուչ, ունայն, ընչազուրկ

7 **Ո՞ր շարքի բոլոր զույգերն են կազմված հականիշներից:**

1) իրազեկ–անտեղյակ, հերքում–հաստատում, գժտվել–հաշտվել
2) զարդարուն–անպաճույճ, անթաքույց–սքողված, կայտառ–շենշող
3) շաղակրատ–քչախոս, քամահրանք–բամբասանք, տարտամ–որոշակի
4) խաղաղ–փոթորկուն, անդորր–սաստիկ, լայնարձակ–անձուկ

8 **Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

1) ***մի սանրի կտավ*** – նույն բացասական հատկություններն ունեցող
2) ***գլխի տակ փափուկ բարձ դնել*** – բարեկեցիկ կյանք ապահովել
3) ***ուրբաթը շուտ գալ, քան շաբաթը*** – որոշված գործը խափանող անակնկալ բան պատահել
4) ***սևը սպիտակ դարձնել*** – սուտը որպես ճշմարտություն ներկայացնել

9 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ *չկա:***

1) Ծերունու հետնորդները սրբությամբ պահպանում էին նրա թողած մասունքները:
2) Մարզպետունին զգում էր վերահասու վտանգը, սակայն չէր կարողանում իշխաններին միավորել:
3) Մեծ իմաստասերը գրեց, թե տկարամիտ են այն գլուխները, որոնց թույր կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայքն է շինված:
4) «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության վերջին քառյակը մեծ տաղերգուի քանքարի փայլատակումն է:

10 **Ո՞ր տարբերակում է ընդգծված բառը իմաստով տարբերվում մյուս տարբերակներում ընդգծվածներից:**

1) Կամ ինչպես քաջքերն **այրերի** մթնից,
   Երբ նայում է մարդ քարափի գլխից
   Կամ թե ուշացած անցնում է ձորով,
   Խաբում են, կանչում ծանոթ ձայներով:
2) Ես գրում եմ բրուտների **այրի** մասին, որի կիսամթում բրուտը ոտքով պտտեցնում է փայտե չարխի կլոր տախտակը:
3) Հաշվեսեղանի հետևում նստած էին սրճարանի տերերը՝ մի **այր** ու մի կին:
4) Եվ մութ **այրերից** մամռոտ ժայռերի,
   Թավուտ ծմակի լռին խորքերից
   Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
   Արձագանքն ահա լսում եմ նորից:

11 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն գոյականների համարները, որոնց գործիական հոլովը կարող է կազմվել *ք*-ով:**

1. իրավունք, 2. արյուն, 3. լռություն, 4. մաս, 5. անուն, 6. հարձակում, 7. անձ

1) 1, 2, 3, 6
2) 2, 3, 4, 7
3) 1, 5, 6, 7
4) 2, 3, 5, 6

12 **Ո՞ր շարքում ածական *չկա:***

1) հպարտորեն, բազմիցս, ոստրե
2) անշուշտ, հիմնովին, թանկարժեք
3) հեծելազոր, բրոնզաձույլ, խորտիկ
4) նույնպիսի, հեռավոր, առանձնապես

13 **Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

1) Ինձ խմբի ավագ նշանակեցին, ու ես տեսա, որ թեկուզ փոքրիկ, թեկուզ յոթհոգանոց խմբի գլուխ կանգնելն ինձ դուր է գալիս:
2) Տասնյակ ձիավորներից առանձնացավ դրոշակակիրը, որը հանեց գոտուց քարշ ընկած շեփորը և հնչեցրեց:
3) Շրջագծի վրա կային անցքեր, որոնցից դուրս էին գալիս վիշապի գլուխներ՝ բերաններում մեկական գնդիկ:
4) Նրան պատասխանեց զանգակի ղողանջը, որ քանի՜երորդ անգամ լսելի եղավ եկեղեցու բարձրությունից:

14 **Ո՞ր տարբերակում դերանվան՝ սխալ հոլովաձևով գործածություն *չկա:***

1) Ես քեզ վրա հույս չեմ դնում:
2) Մեզ մոտից մինչև այդ գյուղը ոտքի ճանապարհ է:
3) Նա դեռ իրեն օրում վիշտ ու տառապանք չէր տեսել:
4) Մինչև լեռնագագաթը իմ հետ ոչ ոք չբարձրացավ:

15 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:**

1) եկավ, հասկացել եմ, ծիծաղում եմ
2) բարձրացի՛ր, ասաց, դողացող
3) հուսանք, դարձի՛ր, վշշում է
4) մնացինք, կհավատա, խոսում էր

16 **Ո՞ր նախադասությունն է բարդ ստորադասական:**

1) Խշշոցը կաքավներին հասավ թե չէ, իսկույն փռռալով իջան արևոտ արտերի վրա:
2) Երկրի թագավորը՝ հեղհեղուկ ու փոքրոգի մի մարդ, նախանձում էր քաջ զորապետի հռչակին՝ իրեն զգալով նվաստ ու չնչին:
3) Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին:
4) Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները. խոնավություն կաթեց քարերի վրա:

17 **Ո՞ր նախադասության մեջ միջոցի խնդիր կա:**

1) Ես եկել եմ այն վերջնական եզրակացությանը, որ մարդիկ հիանում են իրենց չունեցած հատկություններով:
2) Երեկոները մենք հաճախ էինք հավաքվում, կարոտով պատմում մեր անցյալից:
3) Սամույրե մեծ օձիքով վերարկուն հագին՝ նա շրջում էր Սյունիքում՝ աղետի դեմն առնելու համար միջոցներ որոնելու:
4) Եվ ահա այդ նպատակով էլ նա հասավ Հարանց հռչակավոր անապատը, ժողովեց այդտեղ կորովի մարդկանց, կազմեց միաբանություն:

18 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Ով մի քանի օր տեսած չէր լինում Նահապետի աշխատելը, նկատում էր տարբերությունը, ով ամեն օր էր տեսնում, կարծում էր, թե պատն անշարժ իր տեղում է և բոլորովին չի բարձրանում:



19 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն նախադասությունների համարները, որոնցից երկուսում էլ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Թեև քաղաքն այլևս հրապույր չուներ սակայն ամեն ինչ մի ամբողջ աշխարհ էր դիտողի համար և նավթային արդյունաբերությունը և հանքերը և նավագնացությունը:
2. Նրա ահեղագոչ ձայնը անցավ որպես փոթորիկ այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմանները:
3. Ամեն գարուն ձնծաղիկների երևալուն պես գալիս էին արագիլները:
4. Աշնան պայծառ առավոտ էր Արարատյան դաշտի հրաշագեղ մի առավոտ:

1) 1, 2
2) 2, 3
3) 1, 3
4) 2, 4

20 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ** ***չկա:***

1) Սարդարապատում ողջ հայ ժողովուրդը միասնական պայքարի դուրս եկան:
2) Դրսում ցուրտ էր, և գյուղի փողոցներում ոչ մի մարդ, ոչ մի կենդանի արարած չէր երևում:
3) Պետական բոլոր մուծումները ձեռնարկության կողմից կատարվել է ժամանակից շուտ:
4) Այդ օրը պահարանից անհետացան ամուսնու նվիրած մատանին մի քանի ուրիշ զարդերի հետ:

21 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Ըմբոստ մի ծառ՝ առույգ, առողջ ոստերով, անտեսելով արգելքները, անվրդով բարձրանում էր վեր՝ դեպի ամպշող լեռները:
2) Քանի դեռ լույս էր, և ճանապարհը՝ լայն, գնում էի արագ՝ խուսափելով տարատեսակ վտանգներից և փորձանքներից:
3) Ադամը ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր Լիլիթին՝ աչքերը չհեռացնելով նրա՝ բոցերի պես ծփծփացող մազերից:
4) Թե ում էի պարտական իմ փրկության համար՝ ես այդպես էլ չիմացա, բայց այդ միտքն ինձ երկար ժամանակ տանջում էր:

22 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Եվ դառնագին ողբում էր Անանդան անհույս ու հոգեմաշ և լալիս էր առանց արցունքի, …….

1) թե մի՞թե իրավ վատ է մահը, մի՞թե այն այդքան տաժանելի է:
2) քանի որ ինքը նզովել է կյանքը:
3) սակայն հեղձամաղձուկ էր աշխարհը և տաղտկալի:
4) որովհետև վաղուց է, որ քարացել էին արցունքները նրա աչքերում:

23 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Մոտ յոթանասուն տարի առաջ գիտնականները ստեղծեցին նաև հեղուկային շարժիչներ, որոնցով այսօր զինված են տիեզերանավերը:
2. Այսպես գործում է ռեակտիվ շարժիչը, որը, արտանետելով գազեր, ինքը մղվում է առաջ:
3. Մարդկությունը դարեր շարունակ խորհել է թռիչքի շարժումն ապահովող նմանատիպ սարքի մասին, բայց միայն հազար տարի առաջ ստեղծվեցին առաջին պարզ շարժիչները, որոնց կատարելատիպերով այսօր զինված են մարտական և ազդանշանային հրթիռները:
4. Երկու աղյուս բռնած՝ չմուշկներով կանգնե՛ք սառույցին և աղյուսները հե՛տ նետեք ու ակամա առաջ կշարժվեք. որքան ծանր լինեն աղյուսները, այնքան ավելի հեռու կշարժվեք ինքներդ:

1) 3, 4, 2, 1
2) 3, 4, 1, 2
3) 4, 2, 1, 3
4) 4, 2, 3, 1

24 **Ո՞ր հատվածը արևմտահայերենով *չէ:***

1) Ինչո՞ւ արդյոք խորշակահար
Կ’ընե ծաղկունք դեռափթիթ:
2) Դեղի՛ն վարդեր մայիսի,
բուրումներով խնկավետ
թալկության մը մեջ հավետ
կը տժգունին մեկուսի:
3) Ես այգերով ու ցայգերով
Հաճախ մենակ կ’անրջեմ
Անհնարին, երկնագորով
Սեր մը, որուն տերը չեմ:
4) Ամենակալ աստուած բարերար, ստեղծիչ բոլորից,
Լո՛ւր հառաչանաց ձայնիս վտանգի
Եւ երկիւղէ տագնապի ապագայիցն կարծեաց
Փրկեա՛ կարող զաւրութեամբ՝ զերծեալ ի պարտեաց:

25 **Գրերի ստեղծումից հետո առաջինը Աստվածաշնչի ո՞ր գիրքը սկսեցին թարգմանել Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները:**

1) Ծննդոց գիրքը
2) Դավթի սաղմոսները
3) Ժողովողի գիրքը
4) Սողոմոնի առակները

26 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ կա:**

1) Որբացած Դավթին ուղարկում են Իսմիլ Խաթունի մոտ, բայց նա կարճ ժամանակ անց չի ընդունում վերջինիս կաթը և սնվում է Սասունից ուղարկված մեղր ու կարագով:
2) Խալիֆայի կողմից սպասվող վտանգից խուսափելու համար Սանասարն ու Բաղդասարը մոր խորհրդով հեռանում են Բաղդադից:
3) Հոր անեծքով Փոքր Միհրը մնում է անմահ ու անժառանգ, դևերը բռնում են նրան և փակում Ագռավաքարում:
4) Փոքր Միհրը լուծում է հոր վրեժը՝ սպանելով Չմշկիկ Սուլթանին և կոտորելով նրա զորքը:

27 **Ո՞րն է Պ. Դուրյանի գլխավոր մտահոգությունը «Իմ ցավը» բանաստեղծության մեջ:**

1) ճակատագրի պարտադրած մշտական ցավն ու տառապանքը
2) թշվառության մեջ գտնվող հայրենիքին առանց օգնած լինելու մեռնելը
3) երիտասարդ տարիքում մեռնելը
4) առանց սիրո վայելքի կյանքից հեռանալը

28 **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից է տրված հատվածը:**

«Նայում էի գրատախտակի թվերին, աչքերիս առաջ բրդե շալով աղջկա գլուխը, ոտքերը ձյունի մեջ և ձյունի ճերմակության վրա օձի պես սև պարանը»:

1) «Սպիտակ ձին»
2) «Ալպիական մանուշակ»
3) «Միրհավ»
4) «Խոնարհ աղջիկը»

29 **Գ. Զոհրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:**

«Ո՞վ էր տերը այս երկուքին մեջ. երեսուն տարի վերջը, երբ ճախորդությունը իր երկաթե շրջապտույտ օղակներով զինքը կը պաշարեր, այս մարդը կը հասկնար, որ այս անզգա տոպրակը իր տերը եղած էր միշտ»:

1) «Զաբուղոն»
2) «Ճիտին պարտքը»
3) «Այինկա»
4) «Փոստա՛լ»

30 **Ո՞րը Հ. Թումանյանի քառյակի առաջին տող *չէ:***

1) Աշնան ամպին ու զամպին...
2) Հին աշխարհքը ամեն օր...
3) Հե՜յ, ագահ մարդ, հե՜յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ...
4) Էսպես անցան շատ տարիներ...

31 **Տրված հատվածներից ո՞րն է Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:**

1) Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով,
   Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝ անդուլ ու անխոնջ՝ այսպես թովչանքով:
2) Ե՛վ անապատում, և՛ հավերժական
   Անուրջում հոգիս կլսե, կզգա
   Ղողանջը զանգի տիեզերական
   Եվ մեղմ կգգվե տատասկին դժնյա:
3) Գնա՛, քարավա՛ն, ինձ հետդ քա՛ղշ տուր
   Օտար, ամայի ճամփեքի վրա.
   Ուրտեղ կհոգնիս՝ գլուխս վար դիր
   Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
4) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին
   Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:
   Ղողանջն է միայն ձիգ քարավանի
   Հեռավոր, անհայտ ճանապարհների
   Հրապույրներով դյութում իմ հոգին
   Թափառումների տենչով անմեկին:

32 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի …….. անցավ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով:

1) աղջիկ
2) ուրու
3) անուրջ
4) ստվեր

33 **Ո՞ր բառերում հնչյունափոխություն կա.**

1. հրավեր, 2. ընչաքաղց, 3. հանդիսավոր, 4. զեղծարար, 5. դեռափթիթ,
6. ուխտադրուժ, 7. մրցաշար, 8. անդրադարձ:

34 **Ո՞ր նախադասություններում անորոշ դերբայ կա:**

1. Նրանք գնում էին անհայտ մի ուղով՝ փրկվելու հույսը սրտներում պահած:
2. Այդ հովտի առվից ջուր խմելու էին գալիս եղնիկներ, ուլեր ու գառներ:
3. Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի:
4. Այդ մենք ենք գալու, որ հինը փոխենք, որ աշխարհին տանք սեր ու խնդություն:
5. Պետք էր այդ մասին անպայման հայտնել սպարապետին:
6. Խոնջացած պառկեց զմրուխտե խոտի գորգին՝ մի փոքր հանգստանալու:

35 **Ո՞ր բառերում վերջածանց կա.**

1. ազդու, 2. ստնտու, 3. օձյալ, 4. ծաղիկ, 5. ելուստ, 6. դանակ, 7. հրաշապատում, 8. քառակուսի:

36 **Ո՞ր տարբերակներում է նախադասության անդամի պաշտոնը սխալ նշված:**

Մի թխպամած օր, երբ ես և Թումանյանը Լոռուց վերադառնում էինք Թիֆլիս, երկար սպասեցինք հայկական գնացքին, որը պիտի կազմվեր հենց այդտեղ՝ կայարանում, բայց այդ գործն ուշանում էր, և ոչ ոքի հայտնի չէր՝ երբ պատրաստ կլինի:

1. **գնացքին** – ուղիղ խնդիր
2. **կայարանում** – բացահայտիչ
3. **պիտի կազմվեր** – բաղադրյալ ստորոգյալ
4. **երկար** – որոշիչ
5. **Լոռուց** – տեղի պարագա
6. **որը** – ուղիղ խնդիր

37 **Ո՞ր տարբերակներում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված*(տրված խոսքի մասով արտահայտված ենթակա չկա):***

1. Ամեն ոք անում էր իր մտքով անցածը, բայց բոլորը միասին ստեղծում էին մի հեքիաթային վառ ու գունեղ փարիզյան մթնոլորտ: *(դերանուն)*
2. Ո՞վ տվեց մարդուն այն իրավունքը, որ իշխի իր նմաններին: *(գոյական)*
3. Տխրությունս անուշ է որպես Հեռավոր, հեռավոր կարկաչ: *(ածական)*
4. Ու եկողներն էլ խորհուրդ չեն տալու Փնտրել անհնարն ու անկարելին: *(անդեմ բայ)*

38 **Ո՞ր նախադասություններում բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:
2. Բոլորին մեկ առ մեկ աչքի անցկացնելուց հետո հպարտ կեցվածքով վեր կացավ նստած տեղից ու մոտենալով ձեռքով բարևեց յուրաքանչյուրիս:
3. Լուսնկա գիշերներին խարույկի մոտ երիտասարդը ճկնորսների հետ ունկնդրում էր նրանց սազի հոգեհմա ելևէջները ծովի անուշ ձայնը:
4. Ինչպիսի ցնցող տպավորություն թողեց մեզ երիտասարդ գրողներիս վրա նրա նոր գիրքը:
5. Նավի առաջամասում գլխիկոր կանգնածը մտախոհ դիտում էր վճիտ ջրի մակերևույթը մարմարի նման անշարժ և մարմարի նման ողորկ:

39 **Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

հանդիպակած, հապշտակել, անհողդողդ, երկվորյակ, դիցուք, կառկառուն, լայնափողք, գաղթագողի:

40 **Տրված բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**

աման-չաման, անթիվ-անհամար, մարդ-մուրդ, առոք-փառոք, այսօր-վաղը, քաղցր-մեղցր, լեփ-լեցուն, լավ-վատ:

41 **Տրված բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ.**

աշխատավարձ, ատամնաբույժ, հողատեր, մաքսանենգ, հորաքույր, տոնածառ, մեներգ, գիսաստղ:

42 **Նախադասության անդամներից քանիսի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:**

Եթե շրջանցեինք վարարած գետը կամ գնայինք մեծ ճանապարհով, որ հեռացնում էր մեր նպատակակետը, կկորցնեինք շատ ժամանակ, ուստի գետի միջով անվարան գնացինք առաջ:

- **շրջանցեինք** – սահմանական եղանակ
- **շատ** – որակական ածական
- **հեռացնում էր** – պատճառական բայ
- **որ** – ստորադասական շաղկապ
- **վարարած** – հարակատար դերբայ
- **առաջ** – կապ, հետադրություն

43 **Տարբերակներից քանիսո՞ւմ է ընդգծվածը գերադաս նախադասություն:**

- Դաժան բանտում եղբոր զարհուրելի նահատակությունը խելագարեցնում էր նրան, և **<u>հոգին ամենևին չէր ուզում ընդունել</u>,** որ եղբայրն այլևս չկա:
- **<u>Ով էր դա՝</u>** ոչ ոք չէր կռահում, որովհետև դիմակալի տակ դժվար էր ճանաչել նրան:
- Կրակը քրքջում էր մշակների միամիտ փորձերի վրա, և բոցերի լեզուները, **<u>թվում է</u>**, արձակում էին դիվային հռհռոցներ:
- Դու սրբություն չես ճանաչում, և **<u>դրանից է</u>,** որ քո սուրը հենց քո դեմ է ուղղվում:

44 **Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված.**

հանգավորում, համեմատություն, մակդիր, հակադրություն, չափազանցություն:

Թղթից շինած ծաղիկների պես հիվանդոտ,
Թոքախտավոր ստեղների պես ռոյալի,
Փոշուց կերած նկարների նման անթով,
Որպես մեռած գեղեցկուհու մի հայելի՝
Հոգիս տխրել է անբարբառ ու չգիտի՝
Ինչո՞ւ է օրն իրիկնանում ու լուսանում,
Երբ ոչ մի լույս դրսից ընկած ճառագայթի
Չի՞ ամոքում նրա կարոտը անանուն:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Անվանական անդեմ նախադասություններում բայ չի կարող լինել:
2. Միակազմ նախադասությունները չունեն կիրառության նույն հաճախականությունը, ինչ երկկազմները:
3. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններից մեկը կարող է լինել միակազմ:
4. Թերի նախադասության մեջ ենթական և ստորոգյալը միաժամանակ չեն կարող զեղչվել:
5. Անդեմ նախադասությունները, ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության, լինում են երկու տեսակի՝ անվանական և բայական:
6. Թերի նախադասություններում ամբողջությամբ զեղչված ստորոգյալը չի կարող վերականգնվել:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքի բոլոր թվերի դիմաց են ճիշտ նշված:**

Պապի շքախմբի անդամները զբոսնում էին հե-ենական(1) հինավուր-(2) մայրաքաղաքում և դիտում շուրջբոլորը: Շուկայի խլրտուքը ապշեցնում էր: Միր-կան(3) երկարաքղանցք հագուստները խառնվում էին բյուզանդական ոսկ-առ(4) պատմուճաններին: Կային զգ-շավոր(5) վաճառականներ, խր-վիլակներ(6) հիշեցնող սևամոր-(7) գերիներ: Մի կին խ-թին(8) բարբառով ինչ-որ աղո-քներ(9) էր մրմնջում: Արաբները վաճառում էին ու-տեր(10) ու ձիեր:

1) 1-ll, 2-g, 5-ու, 10-ղ
2) 3-իա, 6-թ, 7-թ, 10-ղ
3) 2-g, 6-թ, 8-ր, 9-թ
4) 3-իա, 4-եվ, 7-թ, 8-ռ

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի ը-ն ճիշտ տեղադրված:**

1) կ(ը)նճռոտ, ս(ը)պանել, ընկ(ը)րկել
2) դռ(ը)նբաց, քն(ը)նել, խ(ը)մբվել
3) գտն(ը)վել, տ(ը)րտմել, խճ(ը)ճվել
4) կ(ը)րկնել, հանգց(ը)նել, ձեռն(ը)տու

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:**

1) փափկասուն, դպրոց, բնափայտ
2) դիտանցք, սենեկապետ, երգչախումբ
3) միջանցք, օրինապահ, երևութական
4) մնջախաղ, վերնատուն, ընչացք

49 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **դարակազմիկ** – նոր դարաշրջան բացող, **նյութել** – որևէ դավանության հետևել
2) **երախայրիք** – օգտակար խորհուրդ, **հանգրվան** – հանգստանալու տեղ, կայան
3) **աղորիք** – հացահատիկ աղալու մեքենա, **խայտաճամուկ** – վառ և բազմազան գույներով
4) **քիվ** – ժայռի խոռոչ, **կոչնակ** – եկեղեցի հրավիրող զանգ

50 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) հրավեր, գողոն, նաժիշտ
2) դատարկ, խնդիր, երաշտ
3) պնակ, սնունդ, տրտում
4) ճանապարհ, ընկույզ, սնոտի

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված մեկ արմատից և երկու ածանցից:**

1) համապարփակ, դժկամորեն, բուրաստան, չխոսկան
2) վարկավորում, մակերեսային, վերաքննիչ, բեմադրիչ
3) բաղդատական, տարատեսակ, անարժեք, փոխօգնություն
4) տմարդի, ապավինում, համալսարան, անընթեռնելի

52 **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* որևէ արմատի *չի* կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) ***-ային*** -առաջնեկ, խորհրդակցել, մազանոթ
2) ***-մունք*** -փետրվար, անբաժանելի, համեմ
3) ***-ոն*** -պարագլուխ, ծամկալ, տերևաթափ
4) ***-ենի*** -նշաձող, ընձառյուծ, թզուկ

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ներքին հոլովման:**

1) եղբայր, գարուն, դեղատուն
2) հուշասյուն, գայլաշուն, մականուն
3) ձյուն, բազմանկյուն, ավյուն
4) վանահայր, ուրախություն, ցասում

54 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Նա ինձ առաջնորդեց մի ուրիշ սենյակ, և այդ վայրկյանին այնտեղից արագ քայլերով դուրս եկավ մի կարճահասակ ծերունի:
2) Կապույտ երկնքում՝ արևի դիմաց, մի երկու րոպե շողում են սավառնակի թևերն ու մարմինը:
3) Բարձրանալով քարե փոքրիկ սանդուղքներով՝ մտա մի ընդարձակ սենյակ՝ ցածր առաստաղով:
4) Գիշերը մշտապես հավաքվում են գյուղի կատուները, և նրանցով կարելի է հաշվել, թե քանի ծուխ ունի Անտառամեջ գյուղի տերտերը:

55 **Ո՞ր նախադասության բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

1) Շները գայլի վիզը ծակծկեցին. թաթը բռնել էին. գայլը ուզում էր հետ ցատկել, բայց թաթն ազատելու ուժ չկար:
2) Բողարը ջահել շուն էր. գայլից դեռ մի քիչ վախենում էր, այդ պատճառով էլ հաչում էր դեռ հեռվից:
3) Ես կրունկներով խփեցի ձիու կողերին, մի անգամ էլ նա կանգնեց հետին ոտքերի վրա, զիլ խրխնջաց և առաջ նետվեց:
4) Ձին թռավ որթատունկերի և փոքր ծառերի վրայով և ինձ գետին գցելով՝ վազեց հեռու:

56 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Երբ բակ մտա, ինձ այնպես թվաց, թե սպիտակ տան ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռգոռում է:
2) Ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որն անհրաժեշտ էր գյուղին:
3) Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը տկարացել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է սպասվում վաղը:
4) Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և ենթադրվում է, թե փրկության ուղի չկա, և հանկարծ ցոլում է վիթխարի մի կրակ:

57 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են շաղկապներ:**

1) իսկ, որ, բայց, գոնե
2) թե, եթե, քանի դեռ, թեպետ
3) թեկուզ, հենց, որովհետև, հանուն
4) թե չէ, կամ, քան, արդյոք

58 **Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ *չկա:***

1) Ո՞ր աշխարհում ունեմ շատ բան՝ Սիտք եմ անում՝ է՞ս, թե՞ էն:
2) Ես չեմ երգելու այժմ շառաչուն Գալիքի մասին, որ գալու է դեռ:
3) Եվ երբ չի մնա ոչ մի հույս գաղտնի, Սիրտդ կճչա, արդյոք ո՞ւր ես, կա՞ս:
4) Չգիտեմ՝ որտեղից է գալիս Ջութակի հեկեկանքը տրտում:

59 **Տրված նախադասություններից որի՞ դիմաց է ստորադաս նախադասության բնույթը սխալ նշված:**

1) Ներկաների համար պարզ էր, որ կինը հիվանդի խոսքերին նշանակություն չէր տալիս: *(ենթակա)*
2) Քո նվերը ինձ այն կլինի, եթե կարդաս մեր դասականներին: *(ստորոգելի)*
3) Ջորյանի կինը՝ տիկին Սաթենիկը, շատ սիրալիր ինձ ներս հրավիրեց, թեև ինձ չէր ճանաչում: *(զիջման պարագա)*
4) Երիտասարդներից մի փոքր հեռու նստած էր ավանի փոստատան կառավարիչը, որ բարեդեմ, խելոք աչքերով և գորշավուն մորուքով մի մարդ էր: *(որոշիչ)*

60 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Այն օրը, երբ Գևորգը վերադարձավ ճամփորդությունից, որոշեցին նրան ամուսնացնել:*
   Գևորգի՝ ճամփորդությունից վերադառնալուն պես որոշեցին նրան ամուսնացնել:
2) *Հոր երազանքն այն է, որ որդին իր նման քանդակագործ դառնա:*
   Հոր երազանքը որդու՝ իր նման քանդակագործ դառնալն է:
3) *Երևում էր՝ ինչպես է հանդերի վրա աղեղ տալիս հնձվորի գերանդին:*
   Երևում էր հնձվորի՝ հանդերի վրա աղեղ տվող գերանդին:
4) *Գյուղի բնակիչները վախից կծկվել էին բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում, որ ներքևից չէին երևում:*
   Գյուղի բնակիչները վախից կծկվել էին ներքևից չերևացող բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում:

61 **Ո՞ր նախադասության մեջ է դերբայական դարձվածը *(դերբայը իր բոլոր լրացումներով)* ճիշտ ընդգծված (նախադասությունները կետադրված չեն):**

1) Արտառոց է ինձ համար երբ դրամատիկական երկը համեմատում են բամբակի իսկ ներկայացումը <u>նրանից ստացված</u> հագուստի հետ:
2) <u>Երկար ճանապարհից հոգնած տարեց</u> ուղևորը գլուխը հենել էր գնացքի պատուհանին:
3) Նրա ձախողման <u>պատճառը ուսուցչի հանձնարարությունները ժամանակին չկատարելն</u> էր:
4) Պատերազմից հետո մենք ձեռքներս <u>փողոցի անցորդներին պարզած</u> կանգնել էինք եկեղեցու դռան մոտ:

62 **Ո՞ր նախադասության մեջ փակագծեր *չպիտի* դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

1) Մի օր դա իրենց բաժանման յոթերորդ օրն էր հանկարծ դուռը թակեցին և ինչ-որ անծանոթ մարդ նրան նամակ հանձնեց:
2) Ամբողջ գյուղն այդ գիշեր դուրս էր թափվել բայց արդեն ուշ էր խրճիթը վառվում էր նավթոտ փալասի պես:
3) Տաթևի նշանավոր վանքում Հովհան Որոտնեցու նա նաև նույնանուն համալսարանի հիմնադիրն էր ծավալած գործունեության շնորհիվ միջնադարյան Հայաստանում Տաթևը կրթական խոշոր կենտրոն է դառնում:
4) Ի վերջո դժվար կյանքս ու խաբված սերերս էին որ ինձ դարձրին այն ինչ կամ և համարձակվում եմ ասել ի դեպ սա ինքնագովություն չէ ես ինձ դուր եմ գալիս:

63 **Հատվածներից ո՞րն է Հ. Սահյանի «Անունդ տալիս» բանաստեղծությունից:**

1) Ծանր նստել է և ամեն մեկին
Իրեն արժանի պատիվն է տալիս.
Վայրի աղավնուն՝ հանճարը վայրի,
Մոլորված ամպին իր քիվն է տալիս,
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:
2) Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:
3) Արևոտ մի սար եմ հիշում՝
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու՝
Շուրթերին հայրեն ու տաղիկ…
4) Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սողոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

64 **Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի –
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
Մեր երկիրը հին դարձրին փոշի…

1) «Դանթեական առասպել»
2) «Անվերնագիր»
3) «Մահվան տեսիլ»
4) «Վահագն»

65 **Ո՞ր նախադասության մեջ միայն մեկ որոշիչ կա:**

1) Արթնացող ամպի հառաչն առաջին Գալիս մտնում է ականջը նրա:
2) Խելագարվել է տիեզերքն ամբողջ, Աչքերը չռել իմ հոգու վրա:
3) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց:
4) Երևան են ժամանել յոթանասուն խոշորագույն աստղաֆիզիկոսներ:

66 **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

Սարոյանը գրել է՝ …… իր …. գրողներից մեկի՝ Անտոն Չեխովի …. սկզբունքին. «Իրավացի է նա, ով անկեղծ …..»:

(1. հռչակել, 2. հետևել, 3. եմ, 4. սիրել)

1) 4, 2, 1, 3
2) 2, 4, 1, 3
3) 4, 3, 2, 1
4) 2, 3, 4, 1

67 **Ո՞ր նախադասություններում բայի սխալ ձև կամ բայաձևի սխալ գործածություն կա:**

1. Հենց այդ պահին՝ փողոցն անցնելուց, զգաց, որ գլխապտույտ ունի:
2. Դաշտի խաղաղության մեջ քնքշորեն բուրացող ծաղիկները մի պահ մեղմեցին նրա հոգու ցավը:
3. Անծայրածիր հեռուներում սևին տվող լեռների սուր կատարները ահարկու տպավորություն էին թողում:
4. Մթության մեջ խարխափելով՝ փոքրիկներն առաջ էին շարժվում ու հանկարծակի իրար կպնելիս սարսափած ճչում էին ու կծկվում:

68 **Ո՞ր հատվածներում հանգման անուղղակի խնդիր կա:**

1. Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին,
   Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին:
2. Է՜հ, ի՞նչ արած, բախտը խռով
   Թող աշխարհում մեզ չհիշի,
   Միայն ապրենք մենք սիրելով,
   Թեկուզ ես՝ քեզ, դու՝ ուրիշի:
3. Ինչպես ծերունին ձայնով պառաված
   Ձայնակցում է ժիր թոռնիկի երգին,
   Այնպես էլ ծերուկ անտառը կամաց՝
   Արձագանք տալիս ջրի աղմուկին:
4. Բայց հուշերիս մեջ նայում ինձ դարձյալ,
   Ժպտում են դարձյալ աչքերը քո ջինջ:

69 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Երկիր մոլորակը, որքան էլ ուսումնասիրված, այնուամենայնիվ դեռ բազում գաղտնիքներ ունի մեզ համար, գաղտնիքներ, որոնք ուղղակի հնարավոր չէ բացատրել մերօրյա գիտության զարգացման մակարդակով: Երկրագնդում կան վայրեր, որտեղ ֆիզիկայի ինչ-ինչ օրենքներ պարզապես չեն գործում, օրինակ՝ որոշ վայրերում գնդերը թեք հարթությամբ գլորվում են ոչ թե ներքև, այլ վերև, ուրիշ տեղերում առարկաները, որոնք իրականում ուղիղ են կանգնած, ինչ-որ անկյան տակ գետնի վրա թեքված են երևում: Այդպես է, օրինակ, մոլորակի ամենաառեղծվածային վայրերից մեկում՝ Կալիֆոռնիայում գտնվող մի փոքրիկ բնակավայրում, որտեղ առաջին անգամ բնակություն են հաստատել հնդկացիները: Այստեղ մի քանի անգամ վերակառուցված տունը այդպես էլ ուղիղ չի կանգնում, թեև ըստ հարթաչափի՝ հիմքը կատարելապես ուղղված է լինում: Ավելին՝ մարդիկ այստեղ իրենց իրական հասակով չեն երևում. ոմանք՝ ավելի բարձրահասակ, մյուսներն ավելի կարճահասակ են թվում:

Վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդպիսի անսովոր երևույթներ դիտվում են երկրագնդի տարբեր վայրերում, սակայն հարկ է նշել, որ տարածքները, որոնցում գործում են նման անոմալիաները, խիստ սակավաթիվ են:

Այդ տարածքներն իրենց հետաքրքրությամբ գրավում են զբոսաշրջիկների, ուստի և այդ՝ եկամտաբերության առումով բարենպաստ վայրերում հյուրատներ կառուցող ինժեներների ուշադրությունը:

1. Աշխարհի տարբեր վայրերում դիտվող անսովոր երևույթները հետաքրքրություն են առաջացնում զբոսաշրջիկների և նրանց համար կացարաններ կառուցող ինժեներների համար:
2. Երկիր մոլորակի բոլոր այն վայրերում, որտեղ անոմալ երևույթներ են նկատվում, մարդիկ իրենց իրական հասակից ավելի բարձր կամ ցածր են թվում:
3. Երկրագնդի որոշ վայրերում դրսևորվում են այնպիսի անոմալ երևույթներ, որոնց պատճառը մերօրյա գիտությունը դեռևս չի կարողանում պարզել:
4. Հնդկացիները պարզել են, որ Կալիֆոռնիայում ֆիզիկայի մի քանի օրենքներ չեն գործում:
5. Կալիֆոռնիայի մի բնակավայրում կան տներ, որոնք նույնիսկ վերակառուցումներից հետո էլ ուղիղ չեն կանգնում՝ հակառակ հարթաչափի ցույց տվածի:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ես, դու, նա, ինքը*** անձնական դերանունները թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում հոլովվում են գոյականից տարբեր՝ դերանվանական հոլովմամբ:
2. Հարաբերական դերանունները չեն դառնում նախադասության անդամ:
3. Անորոշ դերանուններից ոչ մեկը ենթակայի պաշտոն կատարել չի կարող:
4. ***Ես ինքս, դու ինքդ, նա ինքը*** կապակցությունների երկրորդ բաղադրիչները բացահայտիչներ են:
5. Հայերենի ժխտական դերանուններն են՝ ***ոչ ոք, ոչ մեկը, ոչ մի, ոչ միայն, ոչինչ:***
6. ***Այսքան, այդքան, այնքան*** ցուցական դերանունները գործածվում են թե՛ որպես գոյականի, թե՛ որպես բայի լրացում: